տնտեսություն մտնելու կամավորության լենինյան  
սկզբունքը՝ համոզելու փոխարեն սկսեցին հարկադրը-  
ման վարչական միջոցները կիրառել միջակների և չքա-  
վորության վերաբերմամբ, ձգտելով, վոր կոլտնտե-  
սությունների մեջ ընդուրկվելու ըստ կարելույն շուտ և  
արշակույն մեծ թվուլ տնտեսություններ և ար-  
շակույց թվայից թվան դեպի կոլտնտեսության բարձրա-  
գույն ձևը՝ կոմունա:

Կուսակցությունն անողոք հարվածեց խորոված-  
ներին և վճռական միջոցներով ուղղեց այդ սխալները,  
կորոնք սպառնում ենին բանվոր դաստկարգի և դյու-  
ղացիության զուգման :

«Ճախ» ոպորտունիզմը նույնական էնչպիս և աջը,  
գործնականում ողնում և դաստկարգային թշնամուն  
հետևագին նրա գործակալությունն և հանդիսա-  
նում :

Կուսակցության քաղաքականությունը խեղա-  
թյուրով «Ճախ» ոպորտունիստական սխալները ող-  
նում են աջ թեքում ունեցածներին հարձակվելու կու-  
լակցության զծի վրա և մեղադրելու կուսակցությանն  
այն բանում, թե նա վորափութեարդ և վոչ թե  
գյուղացիության հետ դաշնաքի քաղաքականությունն,  
այլ գյուղացիության բանության և շահագործման  
քաղաքականությունն :

Ահա՝ ինչու աջ սպորտունիզմին հաղաթահարելու  
համար, վորն այժմ գլխամիոր վտանգն և հանդիսա-  
նում, ողեաք և վճռականապես պայքարել ամեն տեսակ  
«Ճախ» խորովումների դեմ, վորոնք կուսակցությանը  
տանում են դեպի մասսաների շարժումից կտրվելու  
ողին :

Պետք է ի նկատի ունենալ, վոր աջ և ձախ սպոր-  
տունիստները, չնարած փենց բանավոր տուրումիո-  
ցին, սիրով բլոկ են կապում կուսակցության դեմ  
շին:

պայքարելու համար : Այդամի բրոկ եր Լոմինաձե-  
Սիրցովի բլոկը, վոր կազմվեց կուսակցության XVI  
համագումարից հետո : Այս բլոկը կրկնելով տրոց-  
կիստական տեսառմյուները՝ մեր յերկըում սոցիալիզմ  
կառուցելու անհնարինության մասին, բացասում եր  
այն փաստը, թե մենք արդեն թևակոխել ենք սոցիա-  
լիզմի ժամանակաշրջանը : Մյուս կողմից այս բլոկը  
առաջ եր քաշում բացահայտ աչ առաջարկներ մեր  
զարգացման տեմպերի իջեցման մասին՝ հնդամյակի  
յերրորդ, վճռական ասրվա դժվարությունների հան-  
գեպ խուճապի մեջ ընկնելով :

Կուսակցությունը չափչախնց այս յերկերեսանի  
բրոկը նույնակես, ինչպես նա առաջ ջարդել եր տրոց-  
կիստներին և դիմովյելականներին, ապա նաև աջ թե-  
քում ունեցողներին :

Ամեն ու ամենատեսակ թեքումների դեմ պայքա-  
րելով, կուսակցությունը պաշտպանեց մեր յերկըում  
սոցիալիզմ կառուցելու լենինյան պլանը : Այս պլանի  
իրագործման մեջ եր կայանում և կայանում ե կու-  
սակցության քաղաքականության գլխավոր գիծը :

1931 թվի ժողովրդական տնտեսության պլանն ի-  
րականացնելու համար անհրաժեշտ ե, վոր կուսակ-  
ցությունը և կոմյերիտմիությունը պայքարե՛, յերկու-  
ակառի վրա՝ բոլոր տեսակի և ռանդի ոպորառունիզմի  
դեմ :

### ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւմն ե կայանում տրոցկիստների սխալը  
գյուղացիական հարցում :

2. Ինչո՞ւ աջ թեքումը գլխավոր վտանգն ե հանդի-  
սանում :

3. Ինչո՞ւմն ե 1930 թվի գարնան «ձալ» խոտոր-  
վածների սխալների արմատը :

Ի՞՞ՉՈ՞Ր 1931 թվի ՊԼԱՆԸ ՍՈՑԻՍԼԻՍ-  
ՏԱԿԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՔԻ ԱՎԱՐՏ-  
ՄԱՆ ՊԼԱՆ Ե

1931 թվին, հնդամյակի յերրորդ՝ վճռական տա-  
րում բանվոր դասկարգի առաջ կանդնած և անմիջական  
գործնական խնդիր՝ սոցիալիստական եկոնոմիկայի  
հիմքի կառուցումն ավարտել :

Այն հորցին, թե ի՞նչ ե սոցիալիստական եկոնոմի-  
կայի հիմքը, ընկ . Ստալինը հետեւյալ պատասխանն ե  
տալիս .

«Ենք նվաճեցինք պրոլետարիատի դիկտատորան և  
դրանով հենց ֆազական բազա ստեղծեցինք դեպի սոցիա-  
լիզմ շարժվելու համար : Կառո՞ղ ենք արդյոք սեփական ու-  
ժերով ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազան՝ անտեսա-  
կան նոր հիմքը, վորն անհրաժեշտ և սոցիալիզմի կառուց-  
ման համար : Ինչո՞ւմն ե կայանում սոցիալիզմը տնտեսական  
եյությունը և տնտեսական բազան : Արդյո՞ք վոչ այն բանում :  
Վոր յերկիր վրա «յերկնային արքայություն» և ընդհանուր  
բարեկցություն հաստատենք : Վո՞չ, դա դրանում չի կա-  
յանում : Դա սոցիալիզմի տնտեսական եյության մասին  
քաղենիսական, մեշնական պատկերացումն ե :

Սոցիալիզմի տնտեսական բազա ստեղծել, դա նշանակում  
է գյուղատնտեսությունը կապել սոցիալիստական . ինդուս-  
տրիալի ենու և մի ամբողջական տնտեսություն ստեղծել,  
գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիալի դե-  
կավարության յենքարկել, կարգավորել ֆազաքի և գյուղի  
միջն յեղած հարաբերությունը՝ գյուղատնտեսության և  
ինդուստրիալի արդյունքների ուղղակի ֆոխտակության  
եմուսեալ, վակել և վերացնել այն բոլոր խողովակները,  
վորոնց ոգնությամբ առաջ են գալիս դառակարգերը և առաջ  
ե գալիս ամենից առաջ կապիտալը, վերջ ի վերջու արտա-  
դրության այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնց ուղղակի  
անմիջականորեն դեպի դասակարգերի վոչնչացումն են տա-  
նումք :

1931 թվի պլանում դրվագ ժողովրդական տնտե-  
սության հիմնական խնդիրների լուծումը և առանձ-

նապես Միության գյուղացիական տնտեսությունների բնդհանուր թվի կիսից վո՞չ սպակասի համատարած կոլեկտիվացման իրադորաւմն իրոք նշանակում է այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնք տանում են զեպի դասակարգեր փոչնչացումը:

Տնտեսությունների ավելի ու ավելի մեծ թիվ համատարած կոլեկտիվացմամբ ընդգրկելու միջոցով փակլում է այն խողովակներից կարեռագույնը, վորի ոգնությամբ առաջ են դալիս կապիտալիստները—կուլակները։ Կուլակության վորպես դասակարգ լիկվիդացիան, վոր տեղի յե ունենում համատարած կուլակիվացման հիման վրա, ուղղակի և անմիջականորեն վոչնչացնում է կապիտալիստական շահաղործման վերջն հենարանը մեր յերկրում։

Այս ինդրի՝ այն բոլոր խողովակների լիկվիդացիան, վորոնց ոգնությամբ առաջանում են դասակարգերը՝ լուծման հիմքը հանդիսանում է սոցիալիստական արդյունաբերության աճումը։ «Գյուղացիք, ժանր տնտեսատերերը և բանլորները, — դրանք տարբեր դասակարգեր են և դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունը մենք կոչնչացնենք այն ժամանակ, յերբ կոչնչացնենք մանր տնտեսության հիմքը և վիթխարի խոչոր մեքենայական տնտեսության նոր հիմունքները կամեզծենք» (Լևին)։

Արդյունաբերական շինարարության և արտադրության 1931 թվի ծրագրը նպաստակ ունի ստեղծել ձենց այդ «խոչոր մեքենայական տնտեսության հիմունքները»։ 1040 նոր մեքենա-արակորային կայանները նոր տեխնիկան դյուզատնտեսության մեջ անմիշական մաքնոնդեր են հանդիսանում։ 518 արգյունաբերական նոր ձեռնարկությունները յերկրի խոչոր մեքենայական տնտեսության հիմքն են կազմում։

Առաջին կիսամյակում արգեն զործի յեն զցվում 186 նոր ձեռնարկություններ։ Խորհունտեսական-կուտանտեսական շինարարությունը, մեքենա-արակորային կայանների կաղմակերպումը, ցանքսերի մասսա-

յական կոնտրակտացիան, — դրանք բոլորն այն կոնկրետ ջակներն են, որորնց ողնությամբ մենք լուծում ենք առաջադրված խնդիրը՝ «գյուղատնտեսությունը կապել սոցիալիստական ինդուստրիայի հետ և մի ամբողջական տնտեսություն ստեղծել, գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի ղեկավարության յենթարկել»։ Իսկ ու սոցիալիզմի տնտեսական հիմքի կարևորագույն բաղկացացիչ մասերից մեկն է։

Այս ինչու հնդամյակի յերրորդ՝ վճռական տարիա պլանի իրադրությունը ընթանում է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի ավարտման լուրսնդի տակ։

Այս կետում սիստեմը ճշտորոշ պարզել յերկու հիմնական դրույթներ։

Առաջին—սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի ավարտումը տեղի յե ունենում տնտեսական նոր բարեկանության հիման վրա։ Ներկը գեռ չի սպառված, թեզետ և մենք մտել ենք նեպի վերջին ժամանակաշրջանը։ Անհրաժեշտ է ճիշտ պատկերացնել տնտեսական նոր քաղաքականության եյությունը, նրա զարգացման հիմնական ետապները և այն խնդիրները, վոր առաջադրվում են մեկ այժմյան ետապում։ Զիկարելի շփոթել սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը սոցիալիստական լիակատար հասարակության կառուցման հետ։

Երեկորդ—սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի ավարտումը հենվում է սոցիալիստական ինդուստրիայի զարգացման վրա։

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ և նշանակում ավարտել սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը։

ՍՈՅԻՆԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԻ ՀԻՄՔԸ  
ԻՆՉՈ՞Ի ՅԵ ՍՈՅԻՆԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՆ  
ԼԱՑՈՒՄԸՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ

Դասակարգերը վոչնչացնելու և անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար պետք է վոնդել շահագործողներին։ Բացի այդ, պետք է, ինչպես ասում եր լենինը, «վոչնչացնել մանր ապրանքարտադրողներին, իսկ նրանց չի կարելի վոնդել, նրանց չի կարելի ճնշել, նրանց հետ պիտի և հաշու ապրել, նրանց կարելի յե (և պետք է) ձեւափոխել, վերադաստիարակել միայն շատ տևական, դանդաղ, զդույշ կազմակերպչական աշխատանքի միջոցով»։

Իսկ քանի դեռ տարպում է մանր պարանքարտադրողների այս զանդաղ վերադաստիարակչական աշխատանքը, «մանր արտադրությունը կապիտալիզմ և բուրժուազիա յե ծնում միշտ, ամեն որ, ամեն ժամ, տարեարյնուն և մասսայական չափերով»։

Սյովիսի պայմաններում պետք է կուսակցությունը լրացի գասակարգերի վոչնչացման և սոցիալիզմի կառուցման հարցը։ Ապա վո՞րն է կուսակցության այս քաղաքականության անցկացման տնտեսական հենարանը, վո՞րն է մանր արտադրության համատարած նրանական հիմնական լծուկը։

Կուսակցության այս հենարանը, նրա այդ լծակը խոշոր արդյունաբերությունն է։

«Ինեսուրաներն ամրապնդելու, սոցիալիստական հասարակությունն ստեղծելու իսկական և միակ բան հանդիսանում է միայն և միայն—խոշոր արդյու-

նարերությունը», այդպես եր բազմաթիվ անդամ առում լենինը, ընդգծելով խոշոր արդյունաբերության առաջատար դերը մեր հետամնաց յերկիրը նոր սոցիալիստական ձևով հիմնավորապես վերակառութելու գործում։

1920 թվի վերջին (այսինքն քաղաքացիական կովկարչին) խորհուրդների IX համագումարում լենինը բայցարենուի ելեքտրիֆիկացիայի պահանջան նշանակությունը, հարցը վնում եր այսպես։ «Քանի դեռ մենք ապրում ենք մանր դյուլացիական յերկրում, թուսաստանում կապիտալիզմի համար ավելի հաստատուն բաղակա, քան կոմունիզմի համար։ Դա անհրաժեշտ է միտք պահել։ Յուրաքանչյուրը, վոր ուշադրությամբ դիտում ե դյուլական կյանքը քաղաքացին կյանքի համեմատությամբ, գիտե, վոր մենք կապիտալիզմն արմատափել չենք արել և ներքին թշնամու հիմքը, կրվանը չենք քանդել։ Վերջինս պահպան ե մանր տնտեսության վրա և այն քանդելու համար մի միջոց կա՝ յերկրի տնտեսությունը, այս թվում նաև հողագործությունը նոր տեխնիքական բաղայի, ժամանակակից խոշոր արտադրության բաղայի փոխադրել։ Այդպիսի բաղան հանդիսանում է ելեքտրականությունը»։

Սոցիալիստական հասարակակարգը աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն պետք է տա, քան կապիտալիզմը։ Դրանում է տնտեսության հին, փոած կապիտալիստական սխալմը այլ՝ նոր, սոցիալիստականով փոխարինելու պատմական իմաստը։ Սակայն աշխատանքի ավելի բարձր արտադրողականության, քան կապիտալիստականն է, չի կարելի հասնել, յեթե յերկրում արդյունաբերությունը տեխնիկայի կողմից հետ և մնացել կամ ել ընդհանրապես թույլ ե զարդացած և զերակցողը հանդիսանում է մանրապարանքին, ցածր արտադրողական դյուլացիական տընտեսությունը։ Դրա համար եր լենինը և կուսակցությունը իրենց առաջ խոշոր են առաջադրել մեր յեր-

կիրք հետամնաց հողագործականից (ազրաբայիմից) առաջադեմ արդյունաբերական (ինդուստրիալ) յերկիր դարձնել:

«Միայն այն ժամանակ, յերբ յերկիրը կելեքորի-ֆիկացվի, յերբ արդյունաբերությունը, դյուշատըն-տեսությունը և տրանսպորտը կդրվեն ժամանակակից խոշոր արդյունաբերության բաղայի վրա, միայն այն ժամանակ մենք վերջնականացնեն կհաղթենք»: (Լենին):

«Դարձնել մեր յերկիրը իւետրիֆիկացիայի, խոչըր արդյունաբերության և խոչըր կոլեկտիվ գյուղատնտեսության յերկիր պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, նրան անձախ դարձնել կոպիտայիշտական աշխարհից և շնորհական դարձնել պաշտպանվելու նրա հարձակումից.—դա յէ սոցիալիստական խնդրության բաղադրական ժամանականության ելույթումը, վորս անցկացրել և անց և կացնում կուսակցությունը»:

Հասկանալի յէ, վոր արդյունաբերության ամեն մի զարգացումը սոցիալիստական ինդուստրալացման քա-զաքականությունը չի հանդիսանում: Դրա համար ել անհրաժեշտ և ընդգծել սոցիալիստական խնդրության ամփանական յերկու արմատական գծերը:

Առաջին՝ անհրաժեշտ և արդյունաբերությունն այնպես զարգացնել, վոր ապահովվի ծանր արդյունա-բերության (քարածուի, նավթ, հանք, մետաղներ, մեքենաշնություն, հիմնական քիմիա) առավելագույն և առավել արագ աճումը, քանի վոր միայն այս արդյունաբերությունը հենց կարող է ժողովրդական տըն-տեսության բոլոր ճյուղերին տեխնիկական նոր հիմք տալ: Առանց դրան յերկիրը չի ինդուստրիալացվի, մեր կան տնտեսությունը չի տպատագրվի ոտուրյերկրյա սոսրտերկրյա կախումից:

Եթերորդ, անհրաժեշտ և արդյունաբերությունն այնպես զարգացնել, վոր ապահովվի սոցիալիստական ձեռնարկությունների առավելագույն արագ աճումը և արդյունաբերության մեջ սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի նկատմամբ, Առանց դրան չի կարելի վոչնչացնել դասակարգերը,

առանց գրան չի կարելի պահպանել բանվոր կաստկար-դի և գյուղացրության դաշինքը, չի կարելի արմատա-կան ձեռակիուման յենթարկել մանր ապրանքային տըն-տեսությունը:

Կուսակցությունը ատրել եւ տանում ե ինդուս-տրիալացման հենց այսպիսի քաղաքավականություն, վո-րը ապահովում ե և արդեն ապահովել ե սոցիալիստա-կան արդյունաբերության և սոցիալիստական խորհ-ունտեսական—կոլտնտեսական հողագործության գերա-կցումը մեր յերկրում:

## ԽՆՉ ԶԵՎԵԲՈՎ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՇԵՑ ԱՅՍ ԽՆԴԻՐԸ

Իշխանությունն իր ձեռքը առնելով 1917 թվի հոկ-տիմբերին, կուսակցությունը չձգտեց անհապաղ սո-ցիալիզմ մտցնել, այլ Լենինի զեկավարությամբ իրա-դորձեց ժողովրդական տնտեսությանն աստիճանաբար տիրանալու պլանը:

Լենինը և նրա զեկավարությամբ կուսակցությունը յենում ելին այն պարագայից, վոր մեր յերկիր ժողո-վրդական տնտեսությունը անցման բնույթ ե կրում: Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում կա-պիտակիմից դեպի սոցիալիզմ անցում և տեղի ունե-նում: Այս անցումը տեղի յէ ունենում ժողովրդական տնտեսության տարրեր ձևերի միջև տեղի ունեցող պայքարում: Այս ձևերից վոմանք պատկանում են նախկին հասարակակարգին և կորստի յեն մատնված, բայց առանց կովկլու չեն անձնատուր լինում: Մյուս ձևերը լծվել են պրոլետարական հեղափոխության հաղ-թանակի հետ միասին և պայքար են մղում իրենց հաղ-թանակի համար: Դրանումն ե անցման ժամանակաշըր-ջանի եյտությունը այն յերկրի տնտեսական կյանքում, վորի մեջ պրոլետարական հեղափոխություն և տեղի ունենում:

Մեր յերկրում Լենինը ժողովրդատնտեսական հինգ ձևվեր եր հաշվում՝ «1) նահապետական, այսինք-

գյուղանահետության առավել նախնական ձև, 2) մանր ապրանքային արտադրություն (սրան և վերաբերում նաև այն գյուղացիների մեծամասնությունը, վորոնք շաց են վաճառում), 3) մուսնավոր կապիտալիզմ, 4) պետական կապիտալիզմ և 5) սոցիսմիզմ»:

Սորհարդային Միության գլխավորապես ծայրագավառներում բնակչած առավել հետամնաց ժողովուրդների հողագործության և անասնապահության նախավետական տնտեսական ձևի բնորոշ նշանն այն է, վոր նահապետական տնտեսություններն իրենք հենց սպառում են բոլորը կամ համարյա բոլորը, ինչ նրանք արտադրում են իրենք իրենց ընտանիքի, ծուխի, մի քանի ընտանիքի վոչ-մեծ միության-ցեղի ուժերով։ Նրանք չեն մասնակցում կամ համարյա չեն մասնակցում առեւրին և կաղված չեն կամ համարյա կաղված չեն արդյունաբերության հետ։ Այս ձեւը համեմատաբար շուտ և անհետանում և իհարկե յերկրի ժողովրդական տնտեսության մեջ զգալի մեծություն չի ներկայացնեմ։

Այսինչ մանր ապրանքային արտադրությունը, հանձինս աշխատավոր գյուղացիների մտնը տնտեսությունների, տնայնագործների և արհեստավորների, տնտեսության գերակշռող ձեւն եր ներկայացնում (մինչև վերջերս, մինչև համատարած կոլեկտիվացման անցնելը), այդ տնտեսությունը մասնավոր է։ Մանր տնտեսաբերը սոլորաբար չեն շահագործում ուրիշ աշխատանքը։ Արտադրության միջոցները (գործիքները, հումքը) իրեն՝ արտադրողին են պատկանում։ Նրան են պատկանում նաև աշխատանքի արդյունքները։ Արտադրանքի մի մասն այդ տնտեսություններն իրենց են սպառում, բայց զգալի մասը նրանք իրենց համար չեն արտադրում, այլ փոխանակության համար։ Այս միավոր այս տնտեսությունների միջև բնական կազմ ուղարկառության մեջ են և հետեւապես սպատարադրողական։ Այդպիս և մանր ապրանքային արտադրություն

նը։ Նո չի կարող ապահովնել ժաղավարական ունակություն հետադարձա աճումը։

Կապիտալիստական հասարակարգում մասնավոր կապիտալիզմը, վորն առաջ և զալիս մանր ապրանքային արտադրությունից, մանր տնտեսություններին յենթարկում և իրեն, շահագործում և քայլայում և նրանց։ Այսպիսով մի կողմէից մանր տնտեսատերերից առաջ են զալիս մասնավոր կապիտալիստներ, իսկ մյուս կողմէից քայլայլած սեփականատերերը կորցնում են իրենց տնտեսական ինքնուրույնությունը և պրոլետարների շարքերն են գնում (գյուղում ըատըակներ)։

Մանր ապրանքային անտեսությունը կորստի յեմատնված։ Պրոլետարիատի գեկտառուրայի պայմաններում ամբողջ հարցը նրանումն է, վոր մանր արտադրությունը խոչընի ձեւի կուտիւլի, մասնավոր սեփականատերականից նա կոլեկտիվ դարձվի և դրանով խուսափի քայլայման և աղջառացման այն տանչալի ուռզուց, վոր թերում և իր հետ կապիտալիզմը մանր տընտեսության համար։ Սակայն կապիտալիզմն ել և ձբդառում մանր տնտեսությունը խոչընի վերածել, մանր տնտեսություններին շահագործելու և նրանց հսկայական մեծամասնությանը կապիտալի վարձու ստրուկնելը դարձնելու միջացով։

Գլուխարական դիկտատուրայի պայմաններում կատարի պայքար և սեղի ունենում մանր ապրանքային արտադրության մեջափոխման սոցիալիստական և կապիտալիստական ուղիների միջեւ։

Սոցիալիստական մեր ծնկեց պրոլետարական գիկտառուրա հաստատվելու և խոչընադույն ձեռնարկությունները, յերկաթուղիները, բանկերը բանվոր դասակարգի կոլեկտիվ սեփականություն դարձնելու հետ միասին։ Սկզբում, 1917 թվին, պրոլետարական ազգայնացումը դիպավ միայն առավել կարևոր ձևոնարկություններին, իսկ ձեռնարկությունների հսկայական

Ճեծամանությունը մնաց կապիտալիստների ձեռքում : Այս կապակցությամբ Լենինն առաջ քաշեց պետական կապիտալիզմի հարցը :

Պրոլետարական դիկուատուրայի պայմաններում պետական կապիտալիզմ ասելով Լենինը հասկանում էր ձեռնարկությունների այնպիսի տիպը, վորոնք թևագետ և պատկանում են կապիտալիստներին, բայց իրենց գործունեյության բնագավառում գտնվում են պրոլետարական պետության վերահսկողության և ընդհանուր գեղագարության տակ : Այդպիսի պայմաններում խոչըն և միջակ կապիտալիստական ձեռնարկություններից ստիգմաբար միություններ ենին կազմակերպվում ըստ արդյունաբերության ճյուղերի (որնդեկտուններ) :

ԳԺԸ վերևից եր կատարում պետական կարգավորումն ու վերահսկողությունն այս մինչիկանուների վերաբերմամբ : Ձեռնարկություններում բանվորական վերահսկողությունը կապիտալիստների գործունեյությանն հակում եր վարից : Այս կերպ պրոլետարիատը պատրաստվում եր ժողովրդական տնտեսության բոլոր լծակներին լրիվ չափով տիրանալուն :

Կուսակցության քաղաքականությունն այս առաջն ժամանակաշրջանում կայանում եր նրանում, վորոնինդիկանների մեջ միացված ձեռնարկատերերի վրա վերևից պետական վերահսկողության միջոցով և վարից, ձեռնարկությունների անմիջական աշխատանքի, բանվորական վերահսկողության միջոցով կարգավորվի սասնավոր կապիտալիստների գործունյությունը և այս կերպ կապիտալիստական ձեռնարկությունները պետական- կապիտալիստական ձեռնարկությունների վերածվեն :

Այսպիսով Խորհրդային իշխանությունը կապիտալիզմի դարձացումն ուղղեց պետական կապիտալիզմի ռունը : Եղցրալիստական ռայ տարբերը (համարն առավել խոչըն ազգայացված ձեռնարկությունների, յերկաթուղիների, բանկերի) պետական կապիտալիզմի

հայտ միասին պետք ե մանր արտադրության տարերքին դիմուղբայլելին ու ձևափոխելին և' մանր արտադրությունը, և' այդ մանր արտադրությունից առաջած մասնավոր կապիտալիզմը :

Կապիտալիզմի պետական կարգավորման և բանվորական վերահսկողության այս քաղաքականության ժամանակաշրջանը շարունակվեց 1917 թվի հոկտեմբերից մինչև 1918 թվի ամառը : Քաղաքացիական պատերազմի սկզբելը, այն, վոր կապիտալիստները իրենց միջոցներն ու ձեռնարկությունները ուղղակի ուղագործում ելին ներքին հակահեղափոխությանը Փինանսապես աջակցելու համար, պարենալորման գվարությունները, —այս բոլորը կուռակցությանը աարավ գեղակի սննդեալուն :

Կուսակցությունը տնտեսական քաղաքականությունը յենքարկեց ինտերվենտներից յերկիրը պաշտպանելու, պրոլետարիատի դիկտատուրայի և բանվոր դասակարգի պահպանման համար մղվադ պայքարի լոնդիքներին :

Արդյունարերական և առկերտական ձեռնարկությունները խլեցին տեսերից և պրոլետարական պետության սեփականությունը դարձան (պրոլետարական ազգայնացում) : Արգելվեց Հացի և գյուղատնտեսական այլ մթերքների ազատ առևտուրը : Մտցրվեց պարենային մասնատրում, վորով գյուղացիք պետք ե պետությանն հանձնելին բոլորը, բացի իրենց տնտեսության կարիքներին անհրաժեշտ յեղածից : Առեարի լիկվիդացիայի առնչությամբ կազմակերպվեց բնակչության մատակարարման քարտային սիստեմը : Խիստ մեծ քանակով բաց թողնված գրամների արժեքը ընկնում եր և գրամական սիստեմը վերանալու վրա յեր, վորովհետեւ առկերտի բացակայության պայմաններում դրամը ավելորդ եր դառնում : Մթերումները, արտադրությունը և մթերքների բաշխումը կատարվում եյին պրոլետարական պետության հաստատած պլանով :

Յնունոտկան քաղաքականության այս սիստեմը, վոր տարիում եր քաղաքացիական կոմիտարիներում (1918—1920 թ. թ.), հայտնի յե ուստիսկան կոմունիզմի անունով։ Այս քաղաքականությունը միանդռամայն անհրաժեշտ եր յերկիրը պաշտպանելու նկատուումով։ Նա կապիտալիստների վոտքի տակից քաշեց տնտեսական բաղան, կուլսկության ուժեղ հարված հասցվեց։

Այս քաղաքականության ճշտությունը քաղաքացիական կոմիտի պայմաններում ապացուցված ե փորձով և հաստատված է ներքին Հակածեղափոխության և իմպերիալիստական ինտերվենցիայի գեմ կոմիտի յուակյաժման կարգությանի հաղթական ավարտմամբ։ Բայց կուսակցության 1920 թ. արած փորձերը ռազմական կամունիդմի նույն ժեթողներով իրագործել ժողովրդական տնտեսության և առաջին հերթին տրանսպորտի և ծանր արդյունաբերության վերականգնումը, վորպես դի այնուհետև ձեռնարկի ելեկտրիֆիկացիայի պլանի իրագործման, իդուր անցան։ Պարզէն, վոր այս մեթոդներով անկարելի յե տնտեսական վերելք առաջ բերե։ Վառեւանությի և պարենավորման ճգնաժամերը 1920 թի մերջին և 1921 թի սկզբին կուսակցության առաջ ամենայն արությամբ դրեցին տնտեսական հարգականության փոխելու հարցը։

Այդ ժամանակ ահա կուսակցությունը լինինի դեկտարությամբ իր X համագումարում (1921 թ. մարտ) պատմական անդում կատարեց դեսի այսպիս կոչված նոր տնտեսական քաղաքականությունը, դեպի Նեպը։

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ մշամուկություն ունի խոշոր մեքենայական կինուրությամբ գարգացումը ժողնվրդութեան կամ կյանքի համեր։

2. Տնտեսական ի՞նչ ձևեր կային մեր յերկրում այն մունքներին, յերք պրոլետարիատը իշխանությունն իր

ձեռքն առաջ և ի՞նչ նշանակություն ուներ պրամուլյացիանը։

3. Ինչումն եր կայանում բանվորական վերահետազոտությունը։

4. Խաղմական կոմունիզմի բաղադակամաւթյունը ինչումն եր կայանում։

## ԻՆՉՈՒՄՆ Ե ՆԵՊԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Բացատրելով տնտեսական նոր քաղաքականության անցնելու անհրաժեշտությունը, լենինը հիմնվում եր այն պնդումների վրա, վոր առաջ եր քաշել նա դեռ 1918 թվին։ Նա հիմնվում եր մեր եկոնոմիկայի տնտեսական հինգ ձևերի վրա և այն մանր արտադրությունը ձևափոխելու վրա, վորը գերակշռում եր մեր յերկրի ժողովրդական տնտեսության մեջ։ Խաղմական կոմունիզմի տարիներում մանր արտադրությունը խոչըրի, կոլեկտիվի ձևափոխելը չհաջողվեց, քանի վոր այս ձևափոխման միակ լծակը, խոչըր արդյունաբերությունը, վոր պատկանում եր պրոլետարական պետության, քայլայված վիճակի մեջ եր։ Նմանապես չհաջողվեց վերականգնել այս արդյունաբերությունը անմիջականորեն կոմունիստական արտադրության և բաշխման անցնելու մեթոդներով։ Մինչդեռ քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո ժողովրդական տնտեսության վերականգնման հարցերը ծառացան իրենց ամբողջ հասակով։

Դրա համար ել անհրաժեշտ դարձավ հանուն սոցիալիստական արդյունաբերության վերականգնման և զարգացման, նրա դեկավարությամբ և նրա ոգենությամբ զյուլացիական մանր տնտեսությունը ձևափոխվելու համար, ամենից առաջ հնարավորություն տալ, վոր գյուղացիական այդ մանր տնտեսությունն ինքը զարդանաւ։

Պետք ե հստատելու տնտեսական գորում տնտեսության սոցիալիստական ձևի և տնտեսության մանր ապրանքային արտադրության ձևի միջև, պետք ե

տրվել բանովր դասակարգի և միջակ գյուղացիության դաշինքին անտեսական հիմք:

Նոր տնտեսական քաղաքականությունը մտցնելով, բանվոր դասակարգը վիշտում արակ մանր ապրանքարտադրող գյուղացուն, վորք չե կարող իր տրնտեսությունը զարգացնել, յեթե առևտուրը՝ մանր արտադրողների բնական կապը չկա: Առօրին դրան նա կրծատում և արտադրությունը, սպառող տնտեսության չափի հասցնում, այսինքն արտադրում և այնքան, վորքան հարկավոր ե իրեն և իր ընտանիքն: Պետք եր տնտեսապես շահագրղությունը մանր գյուղացուն, նրան իր ավելցուկները տնորինելու հնարավորություն վերապահելով: Դրա համար ել տնտեսական նոր քաղաքականության առաջին որենքը պարենային մասնաւորումը պարենային տուրքով (սկզբում բնանյութով), իսկ հետո դրամական՝ գյուղմիասարկի ձևով) վոխարինելու դեկրետն եր: Սկզբում կուսակցությունը մտագրվել եր արդյունքների կոմունիստական բաշխածան ձեւերից նահանջելիս սահմանափակվել ուղղակի ապրանքափոխանակությամբ, այն ել տեղական մասշտաբով, սակայն ապրանքային հարաբերությունների զարգացումը դրա վրա կանդ չառակ և կուսակցությունը նահանջեց մինչև տուելուրի ու դրամական սիստեմի լրիվ ձևի վերականգնությը: Դրանով արտահայտվեց կուսակցության նահանջը նեղի պարմանենք բռում:

Սակայն ձիշտ չե նեղը միայն վորպես նահանջի քաղաքականություն համարել: Այդպիսի անդմամբ դուրս ելին գալիս կուսակցության դեմ «բանվորական ոպողիցիան», տրոցկիստները և զինովյանականները: Նեղի նահանջի շարժումը վերջացավ 1922 թվին, և կուսակցության XI համադրումարում (1922 թվի գարնանը) լենինը հայտարարեց՝ «նահանջը վերջացել ե»: Լենինը լոզունդ տվեց՝ վերակառուցել այն բոլոր կաղմակերպությունները, վորոնք մինչ այդ հարմարեցված ելին ուղղական կոմունիզմի քաղաքականություն

անցկացնելու համար: Այժմ նրանց առաջ նոր խնդիր եր ծառանում:

«Ամսուր անել սովորել, սովորել վեսա տամելու և նույնիսկ շահինու ոկրութեներով, տնտեսական հաշվարկի սկզբանեներով արտադրել, սովորել պիտական արդյունաբերության առջևական եկանումիկան զյուրացու մանր ապրանքային եկանումիկայի հետ կապել»:

Բոլոր կազմակերպությունների մերակառուցումը ապահովեց նեղի նոր սկզբերի վրա հարձակում սկսելու հնարավորությունը: Այժմ յուրաքանչյուր քիչ թե առ գոաւելու մարդ տեսնում է, մոռ նեղի քառականության իշխանչ մեջ վո՛չ միայն նահանջ և սպառնակում, այլև շարժերի մերժառություն և նոր հոգակում: Կուսակցության XIV համազումարում (1925 թիվ) Զինովյեվի և Կամենեկի ոպողիոնին խմբակը հերթում եր այս անդմամբ և մեղադրում եր կուսակցության ու կե նեղի բացասական կողմերի թերագնահատման մեջ, գլուխելով նեղի՝ մորակես մեր մերություն սոցիալիզմ կառուցելու համար անհրաժեշտ միակ ճիշտ քաղաքականության բացասելու պլատֆորման:

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Լենինի արտահայտությամբ «գրոհի հարձակում» եր: Նոր տնտեսական քաղաքականությունը — դա «տեղական պաշարում եր»:

Կուսակցությունը և բանվոր գանգոր դասակարգը իրենց խնդիր ելին գրել՝ «Զկոտրել առևտուրի, մանր տնտեսության, մանր ձեռնախուռթան, կապիտալիստի հին հասարակական-տնտեսական ձեր, այլ աշխուժացնել առևտուրը, մանր ձեռնարկությունը, կապիտալիզմը, դաշւությամբ և աստիճանաբար տիրապետությունը նորանց, կամ ել նորանց պետական կարգամորման լինթարելու հնարավորություն տառնալով՝ միայն նրանց աշխատացման չափով» (Լենին):

Մի քանիսին թվում եր, վոր այսպիսի քաղաքականությունը տնտեսական ձերերի հին հարաբերակցության վերականգնման քաղաքականություն ե: Բուր-

Ժուաղիան արտասահմանում, բուրժուական ինսելի-  
դինցիան և ունեոր դասակարգերի մնացորդները  
յերկրի ներում Հույսերը դրել եյին այն բանի վրա,  
վոր տնտեսական նոր քաղաքականությունն առաջ կրե-  
րի կապիտալիզմի վերածնունդ և պրոլետարական դիկ-  
տատուրայի և կոմունիստական կուսակցության վե-  
րասերում:

Նեպի առաջին ժամանակաշրջանում կուսակցու-  
թյունը մանր ձեռնարկությունների մասնակի աղջայ-  
նացում կատարեց, միջակ ձեռնարկությունների մի  
ժամար վարձակալության տվեց մասնավոր ձեռնարկա-  
տերերին: Միենույն ժամանակ ոտար կապիտալ ներ-  
գրավելու և արդյունարերության վերականգնումն ա-  
րագացնելու համար կուսակցությունը բռնեց կոնցե-  
սիաների քաղաքականության ուղին, այսինքն՝ ոտար-  
յերերայ կապիտալիստներին վարձակալության տվեց  
առանձին խոյոր ձեռնարկությունները և բնական հա-  
րսությունների մշակումը:

Այսպիսով նեպի ժամանակ ել առաջադավ պետա-  
կան կապիտալիզմի տնտեսական ձեր հանձին կոնցե-  
սիոն և վարձակալական ձեռնարկությունների: Ինչ-  
պես հայտնի յէ, պետական կապիտալիզմը հետագա-  
յում զգալի զարդարում չունեցավ և ժողովրդական  
տնտեսության վերականգնումը իրադարձվեց մեր  
յերկրի բանվորների և աշխատավոր գլուղացիների  
ուժերով: Բայց նեպի սկզբին պետական կապիտալիզ-  
մի հարցերի չուրջը մեծեր ծավալիցին, և ընկեր-  
ություն վոմանց թվում եր, թե հեղափոխության հա-  
մար վտանգավոր և կորստաբեր և կապիտալիզմի զար-  
գացումը թույլ տարի:

Անձնն այդպիսի բնիերներին բացատրեց, վոր  
նեպը՝ ոյ սովհանության տնտեսական ձևի ամրա-  
պելման և հաղթանակի ուղին և վոր մանր ապրան-  
քային տնտեսության Հողի վրա կապիտալիզմի անխու-  
սափելի զարգացումը բոլորովին ահռելի չե, յեթե  
պրոլետարիատը այս անխուսափելի զարգացումն ուղ-  
ղում և պետական կապիտալիզմի հոնք:

Ովողիցիան չեր հասկանում նեպի յերկակի բնույ-  
թը: Այս յերկվությունը կայանում եր նրանում, վոր  
աղաս առեւտրի պայմաններում մակր արտադրության  
Հողի վրա տարերայնորեն աճում են մասնավոր կապի-  
տալիզմի տարրերը, ամրապնդվում ե կուտակը, քառա-  
քի ձեռնարկատերերը՝ նոր բուրժուացիան (արդպես  
կոչված «նեպմանները»): Բայց դա նեպի միայն մի  
կողմն ե: Խոկ մյուս կողմից սոցիալիստական տիպի  
պետական ձեռնարկությունները չուկայի միջնորդ պե-  
տական եկոնոմիկայի և գյուղական տնտեսության ե-  
կոնոմիկայի միջն կաս նն հաստատում և նույնական ա-  
ճում և ղարգանում են: Սոցիալիստական և կապիտա-  
լիստական տարրերի միջն պարբար և ծավարվում բազ-  
մամիւնոն գլուղառական շուկա ին տիրապետելու հա-  
մար: Իհարկե, յեթե կապիտալիստական տարրերը տի-  
րելին առ շուկա ին, դուրս քշելին պետական սոցիա-  
լիստական ձեռնարկությունները, գիւղավորելին գլու-  
ղատնտեսության կապիտալիստական զարգացումը,  
այն ժամանակ, հասկանայի յե, սոցիալիզմի գործը  
անհաջողություն կիրեր: Բայց պրոլետարիատը իշխա-  
նության գլուխ ե անցել հենց նրա համար, վոր տնտե-  
սական զարգացումն ուղղի սոցիալիստական տարրերի  
հաղթանակի կողմը՝ իր դիկտատուրան իրադրժելով,  
այսինքն մանր տնտեսատերերի վերադաստիարակումը  
դեկամարելով և մանր արտադրությունը ձևակունե-  
լով: Բայց պրոլետարիատը նրա համար հենց անց ե  
կազմում միջակի հետ հաստատուն դաշինքի քաղա-  
քականությունը՝ հենվելով չքավորության, խոկ այժմ  
նաև կորոնտեսականների վրա, վորովեսղի ապահովի  
գլուղացիության հիմնական մասամբերի շրջադարձը  
դեպի սոցիալիզմի ուղին:

Կուտակցությունը անց ե կացրել և անց ե կացնում  
նոր տնտեսական քաղաքականությունն այնպես, վոր  
աղասովի սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում:

Այսպիսով զարգացումը նեպի պայմաններում ըն-  
թանում ե «ով ում» սկզբունքով: Հայտնի յե, վոր ար-

դյունաբերության մեջ սոցիալիստական Հատվածի աճումն արդեն ապահովել է կապիտալիստական տարրերին հաղթանակելը։ XVII համագումարում Ստալինն այսպես վորոշեց արդյունաբերության բնագավառի վիճակը. ««Ով ում» հարցը, այն հարցը, թե արդյունաբերության մեջ սոցիալի՞ցմը կաղթի կապիտալիստական տարրերին, թե՞ սրանք կհաղթեն սոցիալիզմին, արդեն հիմնականում լրացված է հոգուա արդյունաբերության սոցիալիստական ձևերի։ Լուծված է վերջնականապես և անդարձ կերպով։»

Գյուղատնտեսության մեջ այս «ով ում» հարցի շուրջը կապիտալիստական տարրերի կատաղի պայքարն է ծագալիում, փորոնք չեն ցանկանում առանց կովի հանձնել իրենց դիրքերը հարձակվող սոցիալիզմին։ Միջակ գյուղացիության մասսայական շրջադարձը համատարած կորեկտիվացման կողմը ապացում է, վոր ժողովրդական անտեսության այս բնագավառում ևս հաղթում են սոցիալիստական տարրերը։

Առ 1-ն ոգոսառուի 1931 թ. ամբողջ Միության մեջ կորտնտեսությունների մեջ եր ընդգրկված գյուղացիական տնտեսությունների 57,9 տոկոսը։ Այդ նշանակում և, վոր 1931 թի ժողովրդատնտեսական այսին կարեվորագույն առաջարաները արդեն կատարված են։ Կորտնտեսականը դարձել է հողագործության կենտրոնական դեմքը։ Հասկանալի յի, վոր այս հանդամանքը գույ մի հիմք չի տալիս կանդ առնել ձեռք բերված մակարդակի վրա և միիթարվել այս հաջողություններով։ Առանց կուլակային տարրերի դեմ պայքարը շարունակելու, առանց կուլնտեսությունների կաղմակալան-անտեսական ամրապնդման, և զիսավորը, — առանց սոցիալիստական արդյունաբերության զարգացման քայլշեկուսն տեմպերի ե'լ ավելի արագացման անկարելի յի ԽՍՀՄ լիսկատար կորեկտիվացման խնդիրը լուծել, վորը հիմնականում պետի ավարտվի հնգամյակի վերջում։

Այսպիսով տնտեսական հար հաղաքանությունը, վոր կուսակցությունը նիշտ և հետևողականորեն անցկացրեց լենինյան զլխավոր գծից ուղարւունիստական թերությունների դեմ պայքարի առաջնորդությունը, ապահովում է սոցիալիստական տարրերի գերակշռությունը ու հաղթանակը կապիտալիստական տարրերի վերաբերմանը մեր յերկրում։

### ՎՈՐՈՇՔ ԵՆ ՆԵՊԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՏՍՊՆԵՐ՝

Նեպի առաջին ժամանակաշրջանում հիմնական խնդիրը իմպերիալիստական և քաղաքացիական կուլուների տարրիներում ավերված ժողովրդական տնտեսության վերականգնման վրա հենվելով։ Դրա համար կուսակցությունը պայքարում եր տրոցիկոստական ոպողիցիայի բոլոր արկածախնդրական փորձերի դեմ, վորոնք նսպատակ ունեցին այս ետապում արդյունաբերության զարգացմանն այնպիսի տեմպեր տալ, վորոնք նրան կկտրեցին գյուղատնտեսությունից, կհարվածեցին բանվոր գասակարգի և գյուղացիության զովման և վերջին հաշվով կվիճեցնելին սոցիալիստական շինարարության գործը։ Կուսակցությունը, զեկավարվելով լենինի ցուցումով, առաջ դանդաղ ցուրտանձգադրեր առողջ ընթանում, ինչպես թվում եր վորու ընկերությունը։ Բայց դրանով կուսակցությունն իր կաւոն ապահովեց մարտների հետ, եր կողմը քաշեց դրաշեցության միջակ մասսաներին, չեղոքացրեց կուլակի ազգեցությունը, վերականգնեց արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը և պայմաններ ստեղծեց հետեւյալ ժամանակաշրջանում առաջխաղաղումն արագացնելու համար։

Նեպի այս հետևյալ ժամանակաշրջանը նոր ինդիր առաջ քաշեց՝ յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության վերականգնեց արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը և պայմաններ ստեղծեց հետեւյալ ժամանակաշրջանում առաջխաղաղումն արագացնելու համար։

նում, գյուղատնտեսության արմասական վերափոխում : ԽՍՀՄ տնտեսական հաջողությունների աճման և կապիտալիզմի յերկրներում ու գաղութներում հեղափոխական շարժման վերելքի կապակցությամբ ուժեղացավ ռազմական վտանգը : Եերկրի պաշտպանունակության արագ ամրապնդման, չողովրդատնտեսությունը ոտարերկրյա կախումից աղատագրման, գյուղատնտեսության տեխնիկական վերադիմումն խնդիրները թելադրեցին արագացնել մեր տնտեսական զարգացման տեմպերը :

Տեմպերի համար մղվազ պայքարը վերակառուցման ժամանակաշրջանում ամբողջ ժողովրդական տընտեսության արմատական ձևափոխման վիթխարի խընդիրների իրադրման անհրաժեշտ պայմանն և հանդիսանում : Գյուղատնտեսության աստվարիզում տեխնիկական վերակառուցումը միաժամանակ ընթանում է մանր անհատական տնտեսությունները խոչըր կողեկտիվ տնտեսությունների ձևափոխելու պրոցեսի հետ :

Հաւելամամբ յե, վոր կուսակցությունը վճռական պայքար և մոռում մեր արդյունաբերության և խորհանունտեսական-կոլտնտեսական շինարարության զարգացման տեմպերը հետ պահելու ամենատեսակ ոպորտունիտական փորձերի դեմ :

Վերակառուցման շրջանի գժվարությունները կարելի յե հաղթահարել միայն սոցիալիստական շինարարության տեմպերի ե'լ ավելի յեռանդուն արագացման միջոցով : Դասակարգային թշնամու զիմադրությունը կարելի յե հաղթահարել միայն ե'լ ավելի յեռանդուն սոցիալիստական հարձակման միջոցով :

Այն հարձակումը, վոր կուսակցությունը տարել և տանում ե ների ուելսերի վրա, առաջ ապահովեց սոցիալիզմի հիմնական բազայի, պետական խոչըր արդյունաբերության և հատկապես ծանր ինդուստրիայի, արտադրության միջոցների արտադրության աճումը : Արդյունաբերության միայն այս ճյուղը յերկրը իս-

կական ինդուստրիալ յերկիր և գարձնում, վորը կարող է կապիտալիստական շրջապատից անկախ զարգացնել իր ժողովրդական տնտեսությունը : Կուսակցությունը քիչ պայքար չի մղել և ի հաշվի արդյունաբերության դյուղատնտեսությունը զարգացնելու կողմնակիցների հետ, և՛ ծանր ինդուստրիալ արագացված զարգացման հակառակորդների հետ, վորոնք նրան հակառակ ելին այն թեթև արդյունաբերության կարիքները, վորը աշխատում է լայն սպառողական շուկայի համար (որինակ, տեքստիլ արդյունաբերությունը) :

Զի կարելի ոտարերկրյա կախումից յերկիրն ազատելու քաղաքականություն վարել՝ տառանց յերկիրն ինդուստրիալացնելու : Զի կարելի յերկրը ինդուստրիալացնել՝ սկսելով «չթի» ծայրից : Նման քաղաքականությունը կփորձաներ և՛ ծանր ինդուստրիային, իսկ հետո նաև թեթեին, վորովհետեւ, ոտարերկրյա կախումից ազատ, թեթև ինդուստրիայի զարգացման համար անհրաժեշտ և սեփական խորիդային մեքենայաշինությունը և գյուղատնտեսական հումքը (տեխնիկական կուլտուրաներ) : Մեքենայաշինության համար մետաղ և պետք : Տեխնիկական հումք ստանալու համար պետք և խոչըր գյուղատնտեսություն ստեղծել : Մի խոսքով ծանր ինդուստրիայի զարգացումը ամրող ծովովրդական տնտեսության վերակառուցման բանալին ե :

Ինդուստրացման հաջողությունները յերկրին ընդհանուր մոտեցըին նաև գյուղատնտեսությունն արագ տեմպերով վերակառուցելու անհրաժեշտությանը : Արդյունաբերությունը հակայական պահանջ եր առաջարկում տեխնիկական կուլտուրաներին՝ վորպես արտադրության հումք, և պարենային կուլտուրաներին ու անասնաբուծական մթերքներին՝ բանմուրներին, նրանց ընտանիքներին, քաղաքային աճող բնակչության մատակարարելու համար : Հետամնաց, ցրիկ յեկած մանր գյուղացիական տնտեսությունը ի վիճակի չեղավ բավարել այս պահանջները : Հանրայնացված արդյու-

նաբերության և չհանրայնացված գյուղատնտեսության զարդացման հակասությունը ծայր աստիճանի իմաստ բնություն ստացավ:

«Կարելի՞ յեւ աբդյոք քիչ թե շատ յերկար ժամանակ խորհրդադին իշխանությունը և սոցիալիստական շինարարությունը թողնել յերկու տարբեր հիմքերի վրա՝ ամենախոշոր և մեջաված սոցիալիստական արդյունաբերության հիմքի և ամենացրված և հետամնաց ժանրապեսն քայլին գյուղացիական տնտեսության վրա։ Վո՛չ, մի կարելի։ Դա յերբեք պիտի վերջանա ամբողջ ժողովրդական տնտեսության լիակատար խորակմամբ։ Ազա ո՞ւր և յեւը։ Յեւը գյուղատնտեսությունը խոշորացնելն եւ, նրան կուտակման, ընդլայնված վերտողադրության ընդունակ դարձնելն եւ և այս կերպ ժողովրդական տնտեսության գյուղատնտեսական բազան վերակառուցելն եւ» (Ստալին)։

Գյուղատնտեսության ամբանման բայլշեիլյան ուղինքա խորհնմանսություններ կազմակերպելու և զյուղացիական տնտեսությունները կրթելուիցացնելու ուղին եւ։

Այս ճանապարհով արդեն լուծվել եւ հացահատիկային պրոբլեմը։ Այս ճանապարհով ել մենք այսոր պայքարում ենք մսի, կարի, բանջարեղենի պրոբլեմը լուծել, վորպեսզի ապահովենք քաղաքային արդյունաբերական բնակչության այս մթերքների պահանջը։

Այս ուղղով ել միայն կարող ենք մենք լուծել թեթև արդյունաբերության տեխնիկական հումքի (բամբակ, վուշ, ճակնդեղ, յուղատու բույսեր, ծխախոռ և այլն) պրոբլեմը և հետեւապես կրարելավենք բնակչության լայն սպասման արդյունաբերական տպաննքներ մտակարելլու։

Մեր հսկայական հաջողությունները սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում պարզորոշ յերեսն յեկան 1930 թվի սկզբին և առանձնապես կուսակցության XVI համագումարի ժամանակ (առաջին բայլշեիլյան ցանքն անցկացնելուց հետո)։ Այս կապակցությամբ նոր ձևով դրվեց նեպի և նելսերի վրա սոցիալիստական հարձակման խնդիրը։

Ահա՛ ինչպես վորոշեց ընկ. Ստալինն այս խնդիրը XVI համագումարում։

«Տվյալ մուենտում կուսակցության բռնած դիրքը կայանում է տնտեսական նակատի առանձին մասերում հարձակումից և՝ արդյունաբերության բնագավառում, և՝ գյուղատնտեսության բնագավառում ամրող նակատմ հարձակման անցնելու մեջ։ XVI համագումարին առավելագե ինքուստրալացման համագումարը եր։ XV համագումարը՝ առավելապես կոլեկտիվացման համագումար։ Դա ընդհանուր հարձակման նախապատրաստումն եր։ Անցյալ ետապներից ի տարբերություն, XVI համագումարին նախօրդող ժամանակաշրջանը ամրող ճակատով սոցիալիզմի ընդհանուր հարձակման ժամանակաշրջան եր հանդիսանում, սոցիալիզմի ուժեղացրած կառուցման ժամանակաշրջան եր հանդիսանում և՝ արդյունաբերության բնագավառում։ XVI համագումարը ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման, կուլակության վրայն դասակարգի մեջինացիայի և համատարած կուեկտիվացման կենսագործման համագումարը ե։»

Սոցիալիստական եկանոնիկայի հիմքի ավարտման խնդրում, վոր դրված ե 1931 թվի պլանի մեջ վորպես կենսորոնական խնդիր, սոցիալիզմի ամրող ճակատով այս ծավալուն հարձակումն իր գործնական արտահայտությունների վրա։

Սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը, վոր հետեւողականորեն իրազործում և կուսակցությունը, Հաղթանակն և տանում մեր յերկրում սոցիալիզմի կառուցման անհնարինության ոպորտունիստական տեսությունների վրա։

